



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք  
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 31-Ա**

<<27>> մարտի 2025 թվական քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ  
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով՝**

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում  
է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի առաջին նստաշրջանի 2025 թվականի մարտի 27-ին ժամը 1530-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում-+կայանալիք ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Հարություն Համբարյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԹՎՈՎ 4 /ԶՈՐՍ/ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ՀՐ" ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՐՊԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 0,00062 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ /GIZ/ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՑԻՆԱՆ-ՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ԵՎ ԱՎԵԼ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

15) ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԵՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԴՆՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 6/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0613-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,000192 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՅԻ ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿԻ ԺԱԺՈՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

17) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ/0347/02/24/ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՍՏԱԿ ՀԱԲԵԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-003-0026-ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,03205 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՍՏԱԿ ՀԱԲԵԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /	Պեմ՝ 0	ձեռնպահ՝ 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	_____	_____
Ե. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	_____	_____
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	_____	_____
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	_____	_____
Ա. ՇԱԲՈՅԱՆ	_____	_____
Հ. ԶԱՏԻԿՅԱՆ	_____	_____
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	_____	_____
Ն. ՍԱՐՈՅԱՆ	_____	_____
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	_____	_____
Գ. ՀԱԿՈՔՅԱՆ	_____	_____
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ	_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<27>> մարտի 2025 թ.  
քաղաք Մարալիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք  
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 32-Ն**

<<27>> մարտի 2025 թվականի քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025  
ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի, 82.1-րդ հոդվածի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԱՆԴԱՄՆԵՐ**

	Կողմ՝ 11	դեմ՝ 0	ձեռնպահ՝ 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ		-----	-----
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ		-----	-----
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ		-----	-----
Է. ՌԻՌՈՒՏՅԱՆ		-----	-----
Ա. ՇԱԲՈՅԱՆ		-----	-----
Հ. ԶԱՏԻԿՅԱՆ		-----	-----
Ժ. ԱԼԵՔՅԱՆ		-----	-----

Ն. ՍԱՐԴՅԱՆ

*[Handwritten signature]*

-----

-----

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

*[Handwritten signature]*

-----

-----

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

*[Handwritten signature]*

-----

-----


Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

*[Handwritten signature]*

-----

-----

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<27>> մարտի 2025 թ.  
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ  
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
Անի համայնքի ավագանու 2025 թվականի  
մարտի 27-ի N 32-Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ  
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**



Կազմվել է՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի  
ղեկավար Արման Սարիբեկյանի կողմից

Հաստատվել է՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի  
համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 27-ի N .. որոշմամբ

**ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ 2025 թվական**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	4
ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ.....	7
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	25
ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	25
ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ).....	32
ՏԱՊ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ.....	35



## Ներածություն

2017 թվականի նոյեմբերին «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի պահանջով ձևավորվեց Անի համայնքը՝ իր մեջ ներառելով 19 բնակավայրեր: Անի համայնքը գտնվում է Շիրակի մարզի Արևմտյան մասում: Համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, բնական և իրենցից պատմական մեծ արժեք ներկայացնող քարանձավներով:

Համայնքի բնակչության 48.8%-ը կանայք են, 51.2%-ը՝ տղամարդիկ:

Բնակչության տարիքային կազմը՝

- 0-6 տարեկանները 1683 հոգի են, որոնցից 772-ը աղջիկներ են, 911-ը տղաներ:
- 7-18 տարեկանները 3846 հոգի են, որոնցից 1763-ը աղջիկներ են, 2083-ը տղաներ:
- 18-63 տարեկանները 15212 հոգի են, որոնցից 7256-ը կանայք են, 7956-ը տղամարդիկ:
- 63-ից բարձր տարեկանները 3424 հոգի են, որոնցից 1951-ը կանայք են, 1473-ը տղամարդիկ:

Հատուկ կարիքներ ունեցող խմբերը՝

- Հաշմանդամություն ունեցող անձինք 1149 են, որոնցից 646-ը կանայք են, 503-ը՝ տղամարդիկ:
- Կենսաթոշակառուները 2717-ն են, որոնցից 1637-ը կանայք են, 1080-ը տղամարդիկ:
- Միայնակ կենսաթոշակառուները 115 հոգի են, որոնցից 85-ը կանայք են, 30-ը տղամարդիկ:
- Միաձոռ երեխաները 75-ն են, որոնցից 36-ը աղջիկ, 39-ը տղա:
- Նպաստառու ընտանիքները 783 են, որից 27-ը՝ կին գլխավորով ընտանիքներ են,
- Ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքները 60-ն են:
- Երեք և ավել երեխա ունեցող ընտանիքները՝ 361-ը:

Տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:<sup>1</sup>

**Համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝**

- համակարգելու տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) տվյալ տարվա անելիքները,
- սահմանելու սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատելու համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառելու համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկելու համախառն ռեսուրսները և բացահայտելու պակասուրդը (դեֆիցիտը),
- համախմբելու համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,

<sup>1</sup> «Մեթոդական ուղեցույց համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման», ԳՄՀԸ, ՀՖՄ, 2017:

- շաղկապելու նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնելու նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական արդյունքները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակելու տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

## **Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները**

Անին մաքուր, բարեկարգ և զարգացող բազմաբնակավայր համայնք է, որն ունի բնակչության համար բավարար կենսապայմաններ և որտեղ մատուցվում են հանրային բոլոր ծառայությունները: Համայնքի զարգացման տեսլականն է՝ ունենալ զարգացած գյուղատնտեսություն, գյուղատնտեսության մեջ ապահովել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը: Ապահովել գյուղատնտեսության զարգացումը՝ ոռոգման և խմելու ջրերի հին համակարգերի հիմնանորոգման, նոր համակարգերի ստեղծման, ավանդական գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման աջակցության և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ գյուղատնտեսության զարգացման՝ փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման, տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների ձեռքբերման, ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների ստեղծման և փոքր, միջին ու մեծ ջերմոցների ստեղծման միջոցով: Բարելավել ենթակառուցվածքների վիճակը: Բարձրացնել տարերային աղետներից պաշտպանվածության մակարդակը: Բարելավել ազգաբնակչության կենցաղային պայմանները: Հնարավորինս աջակցել խոցելի խմբերին: Բարձրացնել բնակիչների մասնակցությունը համայնքի գործերի կառավարմանը: Համայնքում բարելավել գործարար միջավայրը, խթանել նոր ներդրումների ներգրավումը և արտադրական ձեռնարկությունների հիմնումը:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն է՝**

- ապահովել համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի աստիճանական ինտեգրումը և համաչափ զարգացումը՝ չխորացնելով նրանց միջև առկա տարբերությունները և զարգացման անհամաչափությունները,
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի, բրդի հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում,
- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,

- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների աստիճանական բարելավում՝ մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների, գործիքների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:  
 համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, թռչնապահության, մեղվապահության) աստիճանական զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների բարկարգում և լուսավորում,
- Պատմամշակութային տուրիզմի զարգացում
- Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում և արտադրանքի ծավալների աճ
- Մեքենատրակտորային պարկի թարմացում
- Խմելու ջրի մատակարարման ցանցի բարեկարգում
- Համայնքի բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում և շքամուտքերի բարեկարգում:
- Աղբարկղերի ձեռքբերում

- Խաղահրապարակների կառուցում բոլոր բնակավայրերում
- Կաթիլային ոռոգման համակարգի ներդրում
- Լուսավորության ցանցի արդիականացում, էներգիախնայող համակարգերի ներդրում, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացում, համակարգի հուսալիության բարձրացում:
- Բնակավայրերի կանաչապատ տարածքների ընդլայնում
- Ջրամատակարարման համակարգերի վերգետնյա հատվածները ջերմամեկուսացում
- համայնքի կենտրոնի հետ բոլոր բնակավայրերի հասարակական տրանսպորտի գործունեության ապահովում,
- համայնքի բնակավայրերում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտներում ենթակառուցվածքների ընդլայնում և բարելավում,
- Կառուցել նոր կոյուղագծեր
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ բնակելի շենքերի ու առանձնատների գազաֆիկացման, խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման արտաքին և ներբնակավայրային համակարգերի նորոգման և շահագործման, աղբահանության և սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով,
- բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների (բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի, մանկապարտեզների, մշակույթի տների և ակումբների, գրադարանների, բուժկետերի) շենքերի հիմնանորոգում կամ վերակառուցում,
- համայնքի գործարար միջավայրի բարելավում և տնտեսական զարգացում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատ ձեռներեցներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, հողհատկացման, տեղական հարկերի, տուրքերի և վճարների զծով արտոնություններ տրամադրելու) միջոցով,
- ակտիվացնել համայնքի համագործակցությունը պետության, միջազգային և տեղական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի հետ՝ համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումներ ապահովելու նպատակով

## Համայնքի 2024-2025 թվականներին նախատեսված ուղորտային ծրագրեր

- Կոմունալ ենթակառուցվածք /ճանապարհաշինություն/  
(Ոլորտի անվանումը)
- ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի (Մարալիկ 1-ին հատված, Կմ 0+000-Կմ 0+520) հիմնանորոգում  
(Ծրագրի անվանումը)

### ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքապետարան

(Ծրագիրը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

- Ծրագրի ընդհանուր արժեքը 298 861,236 հազար դրամ
- Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը - 12 ամիս
- Ծառայությունների մատուցում  Սպասարկում  Ընթացիկ նորոգում  Գույքի ձեռքբերում
- Կապիտալ նորոգում  Վերականգնում  Ընդլայնում  Փոխարինում  Նորը  Այլ

- **Ծրագրի հիմնավորումը**

Անի համայնքի Մարալիկ բնակավայրի տարածքով անցնող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարական աշխատանքների ընթացքում, միջպետական նշանակության Մ 1 ավտոմոբիլային ճանապարհի այլընտրանքային անցանելությունը ապահովելու համար շուրջ 3 տարի օգտագործվել է բնակավայրի կառուցապատ տարածքի կենտրոնով անցնող Հ. Շահինյան փողոցը:

Ծանրաբեռնված բեռնատար ավտոմեքենաների ինտենսիվ երթևեկության արդյունքում ամբողջությամբ քայքայվել է 1023 գծ. մետր երկարության փողոցը և այն ենթակա է հիմնանորոգման:

Ծրագիրը ընդգրկվել է 2024 թվականի սուբվենցիոն ծրագրում:

- **Ծրագրի նպատակները**

Ճանապարհային ցանցի վերակառուցում, հուսալի և անվտանգ ճանապարհի կառուցում, որը կապահովի բնակիչների հարմարավետ տեղաշարժը, կբարձրանա քաղաքի գրավչությունը և բնակչության բարեկեցությունը

- **Ծրագրի խնդիրները**

- Կարիքի ուսումնասիրություն և գնահատում, ֆինանսական աղբյուրի հստակեցում, ծրագրային փաստաթղթերի մշակում, գնման գործընթացի կազմակերպում

- **Ծրագրի իրականացման ժամանակացույցը**

Հ / հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2023 թ				2024թ								
		9	10	11	12	1	2	3	4	5	6	7	8	
1.	Կարիքի հիմնավորում	✓												
2.	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում		✓											
3	Ծրագրի հայտի ներկայացում			✓										
4	Գնման գործընթացի իրականացում				✓									
5	Շինարարական աշխատանքներ								✓					
6	Ավարտական փաստաթղթերի ներկայացում													✓

- **Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- Ժամանակակից պահանջներին համապատասխան անվտանգ, հարթ ճանապարհի հիմնանորոգում

- **Կապը այլ ծրագրերի հետ**

- Կապ սոցիալ-տնտեսական սուբվենցիոն ծրագրերի հետ

**Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների**

<b>Ծրագրի անվանումը</b>	Անի համայնքի Ձիթհանքով, Մարալիկ, Լանջիկ, Սառնաղբյուր բնակավայրերի ներբնակավայրային փողոցների և Սառնաղբյուր, Շիրակական բնակավայրեր փանող ճանապարհների ասֆալտապատում
<b>Մարզ</b>	ՀՀ Շիրակի մարզ
<b>Համայնքը /համայնքները</b>	Անի համայնք (Ձիթհանքով, Մարալիկ, Լանջիկ, Սառնաղբյուր, Շիրակական բնակավայրեր)
<b>Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից</b>	<p>Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 40 կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 112 կմ հեռավորության վրա:</p> <p>Անի համայնքի Մարալիկ քաղաքը մարզկենտրոնից գտնվում է 27 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 92 կմ:</p> <p>Անի համայնքի Լանջիկ բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 40 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 80 կմ:</p> <p>Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 42 կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 102 կմ հեռավորության վրա:</p> <p>Անի համայնքի Շիրակական բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 17 կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 120 կմ հեռավորության վրա:</p>
<b>Համայնքի /բնակավայրի բնակչությունը</b>	2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքի հաշվառված բնակչություն թիվը կազմում է 23058 մարդ, Ձիթհանքով բնակավայրի բնակչության թիվը՝ 1459 մարդ, Մարալիկ քաղաքի բնակչության թիվը՝ 7251 մարդ, Լանջիկ բնակավայրի բնակչության թիվը՝ 942 մարդ, Սառնաղբյուր բնակավայրի բնակչության թիվը՝ 3576 մարդ, Շիրակավաք բնակավայրի բնակչության թիվը՝ 785 մարդ:
<b>Սահմանամերձ համայնք/բնակավայր</b>	Շիրակական բնակավայրը հանդիսանում է սահմանամերձ բնակավայր:
<b>Բարձր լեռնային համայնք /բնակավայրի</b>	-
<b>Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն</b>	Առկա է. ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի պատվիրապետությամբ համայնքի միկրոոեգիոնալ մակարդակի համակցված փարածական պլանավորման փաստաթղթերը հաստատվել են 2022 թ.
<b>Համայնքի և ծրագրի</b>	Անի համայնքի 19 բնակավայրերից 10-ը /Շիրակական,

<p>իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,</li> <li>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,</li> <li>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,</li> <li>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ</li> </ul>	<p>Լուսաղբյուր, Իսահակյան, Աղին, Սարակապ, Ջրափի, Հայկաձոր, Բագրավան, Անիական և Անիպեմզա/ չունեն կենտրոնացված ջրամատակարարում, իսկ մասնակի կոյուղի ունեն Մարալիկ, Ձորակապ, Շիրակավան, Իսահակյան, Ջրափի և Աղին բնակավայրերը:</p> <p>Ջրամատակարարման համակարգից օգտվում են համայնքի բնակչության 83%-ը, իսկ ջրահեռացման համակարգերից 44 %-ը: Համայնքի բնակչության ջրամատակարարման տևողությունը կազմում է օրական 14-24 ժամ:</p> <p>Անի համայնքի բոլոր բնակավայրերը գազաֆիկացված են և բնական գազից օգտվում են ազգաբնակչության 75 %-ը:</p> <p>Համայնքի վարչական տարածքը կազմում է 44464,68 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 39021.85 հա, վարելահողեր՝ 14950.91 հա: Համայնքի ոռոգելի վարելահողերը կազմում են 913.7 հա, տեսակարար կշիռը՝ 6.1 %, որից օգտվում են բնակչության միայն 12 %-ը:</p> <p>Համայնքի բնակավայրերում փողոցների գիշերային (արտաքին) լուսավորության ցանցն ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 65 %-ը: Համայնքի բնակավայրերում առկա փողոցների գիշերային լուսավորության 79%-ը ԼԵԴ տիպի էներգախնայող լուսատուներ են:</p>
<p>Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը</p>	<p>Ծրագրով նախատեսվում է ասֆալտապատել՝</p> <p>Ձիթհանքով բնակավայրի ներբնակավայրային 3-րդ փողոցի <b>700</b> գծ. մետր երկարության հատվածը.</p> <p>Մարալիկ քաղաքի ներբնակավայրային Երիտասարդական փողոցի <b>762</b> գծ. մետր երկարության հատվածը.</p> <p>Լանջիկ բնակավայր մտնող կենտրոնական 1-ին և 2-րդ փողոցների <b>1348</b> գծ. մետր երկարության հատվածը.</p> <p>Սառնաղբյուր բնակավայր տանող ճանապարհի <b>1024</b> գծ. մետր հատվածը և ներբնակավայրային թիվ 9 փողոցի <b>796</b> գծ. մետր հատվածը.</p> <p>Շիրակավան բնակավայրեր մտնող ճանապարհի <b>461</b> գծ. մետր</p>



	<p>երկարության հատվածը.</p> <p><b>Ընդամենը ճանապարհներ՝ 5091 գծ. մետր, մակերես՝ 47 467.62 քառ. մետր:</b></p> <p><b>Ծրագրի շահառուների թիվը կազմում է 14013 մարդ, տնային տնտեսությունների թիվ՝ 3320:</b></p> <p>Ձիթհանքով, Մարալիկ, Լանջիկ և Սառնաղբյուր բնակավայրերի հիմնանորոգման ենթակա ներբնակավայրային և Շիրակավան բնակավայրեր մտնող ճանապարհները հիմնականում գրունտային են և գտնվում են քայքայված ու անբարեկարգ վիճակում: Իսկ Սառնաղբյուր տանող ճանապարհը հիմնականում ասֆալտապատ է, սակայն 796 գծ. մետր հատվածը գտնվում է խիստ քայքայված և անբարեկարգ վիճակում: Ճանապարհների քայքայվածության պարճառով լուրջ դժվարություններ են ստեղծվել տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական մեքենաների ու մեխանիզմների, ինչպես նաև հեղուկ երթևեկության համար: Ստեղծված իրավիճակը խոչնդոտում է նաև գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման գործընթացին: Բնակավայրերը հարուստ են պարմամշակութային հուշարձաններով և ճանապարհների բարեկարգ վիճակը մեծապես կնպաստի զբոսաշրջության զարգացմանը:</p>
<p><b>Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին</b></p>	<p>Ծրագրի իրականացման արդյունքում Ձիթհանքով, Մարալիկ, Լանջիկ, Սառնաղբյուր և Շիրակավան բնակավայրերը կապահովվեն ներբնակավայրային և բնակավայր մտնող բարեկարգ ճանապարհներով: Բավարար և հարմարավետ պայմաններ կապահովվեն տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական մեքենաների ու մեխանիզմների, ինչպես նաև հեղուկ երթևեկության համար: Կապահովվի տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական մեքենաների անխափան աշխատանքը: Արդյունավետ պայմաններ կստեղծվեն գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման գործում: Այն կնպաստի բնակավայրերում տուրիզմի զարգացմանը:</p> <p>Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բնակավայրերի <b>14013</b> բնակիչների և բնակավայրեր այցելող քաղաքացիների երթևեկության համար կապահովվեն անվտանգ և հարմարավետ պայմաններ:</li> <li>• Կկանխվեն տրանսպորտային միջոցների հնարավոր վթարները և քայքայումը:</li> <li>• Կաշխուժանա գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման գործընթացը:</li> <li>• Նպաստավոր պայմաններ կապահովվեն զբոսաշրջության զարգացման համար:</li> </ul>
<p><b>Ծրագրի արդյունքներին</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ներբնակավայրային և բնակավայրեր տանող</li> </ul>

**հասնելու գործողությունները և միջոցառումները**

ճանապարհների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և գնահատում, առավել քայքայված հատվածների նշագծում և աշխատանքների ծավալի հաշվարկում:

- Համապատասխան որակավորում ունեցող կազմակերպությանը տեխնիկական վիճակի ուսումնասիրության պատվիրում, համապատասխան եզրակացությունների ստացում:
- Հանրային լուծումների անցկացում:
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության անցկացում:
- Տեխնիկական պայմանների ապահովում:
- Օրենքով սահմանված կարգով մրցույթների կազմակերպում:
- Մրցույթի արդյունքների ամփոփում, մրցույթում հաղթող կապալառու կազմակերպության, ինչպես նաև տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրերի կնքում:
- Շինարարական աշխատանքների կազմակերպում:
- Աշխատանքների ընթացքի և որակի նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանության պարբերաբար ստուգում:
- Ըստ անհրաժեշտության՝ կապալառուի կողմից իր միջոցների հաշվին, տեխնիկական հետազոտությունների ու փորձարկումների իրականացում:
- Ֆինանսական ներդրման համայնքային մասնաբաժնի համաֆինանսավորման ապահովում:
- Աշխատանքների հանձնում-ընդունում և շինարարական օբյեկտների ավարտական ակտի (շահագործման թույլտվություն) ձևակերպում:

**Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի**

Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են: Ծրագրի իրականացման, գնումների գործընթացի կազմակերպման արդյունքում ձևավորված վերջնական արժեքի չափով կավելանա համայնքին պատկանող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը: Կունենանք բարեկարգ ներբնակավայրային և միջբնակավայրային ավտոճանապարհներ և հետիոտն անցումներ:

**Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա**

Ծրագրի շահառուները Անի համայնքի Ձիթհանքով, Մարալիկ, Լանջիկ, Սառնաղբյուր և Շիրակավան բնակավայրերի **14013** բնակիչներն են, ինչպես նաև ճանապարհներից օգտվող այլ քաղաքացիները, ովքեր հնարավորություն կունենան երթևեկել բարեկարգ և անվտանգ ճանապարհներով:

Բոլոր բնակիչները ստանալու են ուղղակի օգուտ ծրագրի իրականացումից:

Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում համապատասխան բնակավայրերում կստեղծվեն 20-25 ժամանակավոր բանվորական և մասնագիտական աշխատատեղեր: Հիմնական աշխատատեղեր չեն ստեղծվի:

Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը

Համայնքի նախորդ տարվա բյուջեն՝ 904061.6 հազ. դրամ

	Պլանը /Հազար դրամ/	Փաստացի /Հազար դրամ/	Տոկոսը %
<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝</b>	1048246.7	1017048.6	97.0
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	904061.6	890455.7	98.5
- Սեփական եկամուտներ	272723.8	262492.9	96.2
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	202901.1	183967.9	90.7
<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝</b>	1138290.1	1011710.6	88.9
- Վարչական բյուջեի ծախսեր	905305.1	859209.2	94.9
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	291701.0	209876.4	71.9
<b>Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝</b>	316701.0	217958.5	68.8
- ճանապարհաշինություն	22800.0	16433.6	72.1
- ջրամատակարարում	108204.8	104948.4	97.0
- փողոցային լուսավորություն	0	0	0
- գյուղատնտեսություն	17057.0	15145.2	88.8
- Բնակարանային շինարարություն	0	0	0

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

Ընթացիկ տարվա բյուջե՝ 1153014,1 հազ. դրամ. Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

	Պլանը
<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝</b>	1153014.1
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	1153014.1
- սեփական եկամուտներ	283920.1

- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	210000.0
<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝</b>	<b>1248395.5</b>
- Վարչական բյուջեի ծախսեր	1159014.1
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	299381.4
<b>Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝</b>	<b>299381.4</b>
- գյուղատնտեսություն	1000.0
- ճանապարհաշինություն	215531.4
- բնակարանային շինարարություն	33000.0
- ջրամատակարարում, ջրահեռացում	4500.0
- տեխնիկական միջոցների ձեռքբերում	4000.0
- Գույքի ձեռքբերում	13000.0

**Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը**

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվա բյուջեն՝ **2170422.5 հազ. դրամ**։

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարվա բյուջեն՝ **2284152.5 հազ. դրամ**։

Ներկայացնել ծրագրի իրականացման և իրականացման տարվան հաջորդող տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտները և ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից նախատեսված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով

	Ծրագրի իրականացման տարի 2025 թ. Հազ. դրամ	Ծրագրի իրականացման տարվան հաջորդող 2026 թ. տարի հազ. դրամ
<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝</b>	<b>2170422.5</b>	<b>2284152.5</b>
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	1160422.5	1244152.5
- Սեփական եկամուտներ	291328.9	305128.5
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	1010000.0	1040000.0
<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝</b>	<b>2170422.5</b>	<b>2284152.5</b>
- Վարչական բյուջեի ծախսեր	1160422.5	1244152.5
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	1010000.0	1040000.0

<b>Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝</b>		
- ճանապարհաշինություն	1124358.7	1300000.0
- ջրամատակարարում, ջրահեռացում	160000.0	200000.0
- փողոցային լուսավորություն	-	25000.0
- գյուղատնտեսություն	-	
- Բնակարանային շինարարություն	115000.0	120000.0
-		
<b>Ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսված ծախսերը, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝</b> <i>/ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի համար համայնքի ֆոնդային բյուջեից նախատեսված գումարները՝ ըստ ոլորտների/</i>	1559358.7	
- ճանապարհաշինություն	1124358.7	1300000.0
ջրամատակարարում/ջրահեռացում	160000.0	200000.0
- փողոցային լուսավորություն	-	25000.0
- գազամատակարարում	-	
- նախադպրոցական հաստատություններ	275000.0	0.0
- հասարակական շենքեր		
- գույքի, տեխնիկայի ձեռքբերում	40000.0	70000.0

**Հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրում** *2023 թվականի հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրման մակարդակը կազմել է 97 %, իսկ 2024 թվականին՝ 120%:*

**Համայնքի ծրագրի իրականացման տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված բյուջետային մուտքերի (ներառյալ՝ ֆինանսական համա- հարթեցման դոտացիայի գծով նախատեսված մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման**

անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով)	
<p>Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝</p> <p>- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ,</p> <p>- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,</p> <p>- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,</p> <p>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,</p> <p>- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,</p> <p>ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ _____ դրամ</p> <p>ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ</p>	<p>Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է <b>1,296,530,471</b> (մեկ միլիարդ երկու հարյուր իննսուներեք միլիոն հինգ հարյուր երեսուն հազար չորս հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ (100%)</p> <p><b>2,750,000</b> (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ</p> <p>Ներառված է օբյեկտների նախագծման արժեքում:</p> <p>Ներառված է ծրագրի ընդհանուր բյուջեում:</p> <p>Ներառված է ծրագրի ընդհանուր բյուջեում:</p>
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	<b>713,091,759</b> (յոթ հարյուր տասներեք միլիոն իննսուներեք հազար յոթ հարյուր հիսունինը) ՀՀ դրամ (55%):
Այլ ներդրողներ	

<b>Ծրագրի իրականացման փուլերը</b>	Սկիզբը 01.05.2025 թ. փուլերը՝ 150 օր.
<b>Ծրագրի ծախսերը</b>	<p>Մանրամասն ներկայացնել ծախսերը՝ կցելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերը:</p> <p>Ծրագրով նախատեսվող ծախսերը պետք է լինեն իրափեսական, ֆինանսական հաշվարկները և նախահաշիվները՝ հնարավորինս հստակ, հիմնավոր և մանրամասն:</p> <p>Սարք-սարքավորումների ձեռքբերման դեպքում ներկայացնել հնարավորինս հստակ, հիմնավոր և մանրամասն տեխնիկական բնութագրերը, ֆինանսական գնահատականները և առնվազն երեք կազմակերպությունների կողմից տրված գնահատումները:</p>

<b>Ծրագրի անվանումը</b>	Անի համայնքի Սարակապ բնակավայրի խմելու ջրի համակարգի կառուցում, սահմանամերձ Բագրավան բնակավայրից Անիավան-Անիպեմզա բնակավայրերը սնուցող ջրափարի անցկացում:
<b>Մարզ</b>	ՀՀ Շիրակի մարզ
<b>Համայնքը /համայնքները</b>	Անի համայնք Սարակապ, Բագրավան, Անիավան, Անիպեմզա բնակավայրեր
<b>Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից</b>	<p>Անի համայնքի Սարակապ բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 35 կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 130 կմ հեռավորության վրա:</p> <p>Բագրավան բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 40 կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 117 կմ հեռավորության վրա:</p> <p>Անիավան բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 45 կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 112 կմ հեռավորության վրա:</p> <p>Անիպեմզա բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 53 կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 104 կմ հեռավորության վրա:</p>
<b>Համայնքի /բնակավայրի բնակչությունը</b>	<p>2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքի հաշվառված բնակչություն թիվը կազմում է 23058 մարդ,</p> <p>Սարակապ բնակավայրի բնակչության թիվը՝ 598 մարդ:</p> <p>Բագրավան բնակավայրի բնակչության թիվը՝ 812 մարդ:</p> <p>Անիավան բնակավայրի բնակչության թիվը՝ 342 մարդ:</p> <p>Անիպեմզա բնակավայրի բնակչության թիվը՝ 418 մարդ:</p>
<b>Սահմանամերձ համայնք/բնակավայր</b>	Բագրավան, Անիպեմզա
<b>Բարձր լեռնային համայնք /բնակավայրի</b>	-
<b>Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն</b>	Առկա է. ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված փարածական պլանավորման փաստաթղթերը հաստատվել են 2022 թ.
<b>Համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝</b>  - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման	<p>Անի համայնքի 19 բնակավայրերից 10-ը /Շիրակավան, Լուսաղբյուր, Իսահակյան, Աղին, Սարակապ, Ջրափի, Հայկաձոր, Բագրավան, Անիավան և Անիպեմզա/ չունեն կենտրոնացված ջրամատակարարում, իսկ մասնակի կոյուղի ունեն Մարալիկ, Ձորակապ, Շիրակավան, Իսահակյան, Ջրափի և Աղին բնակավայրերը:</p> <p>Ջրամատակարարման համակարգից օգտվում են համայնքի բնակչության 83%-ը, իսկ ջրահեռացման համակարգերից 44 %-ը:</p> <p>Համայնքի բնակչության ջրամատակարարման տեղությունը կազմում է օրական 14-24 ժամ:</p>



<p>տևողությունը,</p> <ul style="list-style-type: none"> <li>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,</li> <li>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,</li> <li>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ</li> </ul>	<p>Անի համայնքի բոլոր բնակավայրերը գազաֆիկացված են և բնական գազից օգտվում են ազգաբնակչության 75 %-ը:</p> <p>Համայնքի վարչական տարածքը կազմում է 44464,68 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 39021.85 հա, վարելահողեր՝ 14950.91 հա: Համայնքի ոռոգելի վարելահողերը կազմում են 913.7 հա, տեսակարար կշիռը՝ 6.1 %, որից օգտվում են բնակչության միայն 12 %-ը:</p> <p>Համայնքի բնակավայրերում փողոցների գիշերային (արտաքին) լուսավորության ցանցն ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 65 %-ը: Համայնքի բնակավայրերում առկա փողոցների գիշերային լուսավորության 79%-ը ԼԵԴ տիպի էներգախնայող լուսատուներ են:</p>
<p>Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը</p>	<p><b><u>Բաղադրիչ-1</u></b></p> <p>Ծրագրով նախատեսվում Անի համայնքի Սարակապ բնակավայրում կառուցել խմելու ջրի ներմուծման համակարգ: Վերականգնել օրական կարգավորման 2 ջրամբարները, անցկացնել Դ 63մմ -Դ160մմ. <b>5867 գծ.մ</b> ընդհանուր երկարության ներքին ցանց, տեղադրել կարգավորիչ փականներ և ջրաչափական սարքեր:</p> <p>2022 թվականին սուվենցիոն ծրագրի շրջանակներում Սարակապ բնակավայրին խմելու ջրի մատակարարում ապահովելու համար Անի համայնքի Աղին բնակավայրի տարածքում հորատվել է խորքային հոր և տեղադրվել է 66 Կվտ հզորության խորքային պոմպ, անցկացվել է Դ 160մմ տրամաչափի 351 գծ. մետր և Դ110մմ տրամաչափի 1870 գծ.մ երկարության խողովակաշարեր: 2024 թվականին պետական ծրագրի շրջանակներում անցկացվել է Դ-110 մմ տրամաչափի 2900 գծ. մ. երկարության ջրատար և</p> <p>Սարակապ բնակավայրի խմելու ջրի մատակարարումն իրականացվում է բնակավայրում առկա միակ բնական աղբյուրի միջոցով, որի որակական հատկանիշները չեն համապատասխանում պահանջվող չափորոշիչներին: Աղբյուրի ցածր թողունակությունը չի բավարարում բնակչության խմելու, կենցաղային և անասնապահության պահանջները: Բնակչությունը բնական աղբյուրից ջուրը տեղափոխում են դույլերի և սայլակների միջոցով: Բնակավայրը չունի ջրամատակարարման ներմուծման ցանց: Խորհրդային տարիների կառուցվել և անավարտ է թողնվել 250 խոր.մ տարողության օրական</p>

	<p>կարգավորման 2 ջրամբարները:</p> <p><b><u>Բաղադրիչ-2</u></b></p> <p>Ծրագրով նախատեսվում է Բագրավան բնակավայրում գործող խորքային հորի ջրաղբյուրից անցկացնել Անիավան և Անիպեմզա բնակավայրերը սնուցող Դ 125-160 մմ տրամաչափի <b>6470 գծ.</b> մետր ընդհանուր երկարության նոր ջրատար: Վերանորոգել Անիավան բնակավայրի 300 խոր. մետր և Անիպեմզա բնակավայրի 500 խոր. մետր տարողության օրական կարգավորման ջրամբարները, տեղադրել կարգավորիչ և հեփադարձ փականներ:</p> <p>Բագրավան-Անիավան-Անիպեմզա բնակավայրերը սնուցող ջրատարը կառուցվել է 1980-ական թվականին և երբևէ նորոգման չի ենթարկվել: Խողովակաշարի քայքայվածության պատճառով հաճախակի են դարձել ջրագծի վթարները և տևական ժամանակով ընդհատվում են բնակավայրերի ջրամատակարարումը: Չի պահպանված խողովակաշարի առանձին հատվածների տեղադրվածության անհրաժեշտ խորություն:</p>
<p><b>Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին</b></p>	<p>Ծրագրի իրականացման արդյունքում Անի համայնքի Սարակապ, Անիավան և Անիպեմզա բնակավայրերը կապահովվի շուրջօրյա անխափան ջրամատակարարմամբ:</p> <p><b>Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կբարելավվի Սարակապ, Անիավան և Անիպեմզա բնակավայրերի 1358 բնակչության կենցաղային և սանիտարա-հիգիենիկ պայմանները.</li> <li>• Կթեթևանա հատկապես կանանց ջուր տեղափոխելու ֆիզիկական ծանրաբեռնվածությունը.</li> <li>• Կզարգանա անասնապահությունը.</li> <li>• Կհիմնվեն մրգատու այգիներ և բանջարանոցներ.</li> <li>• Կկանխվի գյուղական բնակավայրերի բնակչության արտահոսքը.</li> </ul>
<p><b>Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Զրամատակարարման համակարգերի պոմպակայանների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն և փորձարկում:</li> <li>• Առկա խողովակաշարերի և ՕԿԶ-երի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, կատարվելիք աշխատանքների ծավալի հաշվարկում և տեխնիկական բնութագրի կազմում:</li> <li>• Համապատասխան որակավորում ունեցող կազմակերպությանը տեխնիկական վիճակի</li> </ul>

	<p>ուսումնասիրության պատվիրում, համապատասխան եզրակացությունների ստացում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հանրային լսումների անցկացում:</li> <li>• Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության անցկացում:</li> <li>• Տեխնիկական պայմանների ապահովում:</li> <li>• Օրենքով սահմանված կարգով մրցույթների կազմակերպում:</li> <li>• Մրցույթի արդյունքների ամփոփում, մրցույթում հաղթող կապալառու կազմակերպության, ինչպես նաև տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրերի կնքում:</li> <li>• Շինարարական աշխատանքների կազմակերպում:</li> <li>• Աշխատանքների ընթացքի և որակի նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանության պարբերաբար ստուգում:</li> <li>• Ըստ անհրաժեշտության՝ կապալառուի կողմից իր միջոցների հաշվին, տեխնիկական հետազոտությունների ու փորձարկումների իրականացում:</li> <li>• Ֆինանսական ներդրման համայնքային մասնաբաժնի համաֆինանսավորման ապահովում:</li> <li>• Աշխատանքների հանձնում-ընդունում և շինարարական օբյեկտների ավարտական ակտի (շահագործման թույլտվություն) ձևակերպում:</li> </ul>
<p><b>Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի</b></p>	<p>Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են: Ծրագրի իրականացման, գնումների գործընթացի կազմակերպման արդյունքում ձևավորված վերջնական արժեքի չափով կավելանա համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը:</p> <p>Ծրագրի իրականացման արդյունքում Անի համայնքի Սարակապ, Անիական և Անիպեմզա բնակավայրերը կապահովվի շուրջօրյա ջրամատակարարմամբ:</p>
<p><b>Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա</b></p>	<p>Ծրագրի ուղղակի շահառուներ են Անի համայնքի Սարակապ բնակավայրի 138, Անիական բնակավայրի 80 և Անիպեմզա բնակավայրի 134 տնային տնտեսություններ /բնակչության ընդհանուր թիվը՝ 1358 մարդ/:</p> <p>Ծրագրի իրականացման արդյունքում ջրի կորուստները կնվազեցվեն 98 տոկոսով: Կընդլայնվեն համայնքի սեփականություն հանդիսացող ջրատնտեսական համակարգերի ցանկը:</p> <p>Բնակավայրերի բոլոր բնակիչները ստանալու են ուղղակի օգուտ ծրագրի իրականացումից:</p>
<p><b>Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական</b></p>	<p>Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում բնակավայրում կստեղծվի 20-25 ժամանակավոր բանվորական և</p>

աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	մասնագիտական աշխատատեղեր: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի հիմնական երկու նոր աշխատատեղ /ջրագծ փականագործ/:			
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	Համայնքի նախորդ տարվա բյուջեն՝ 1048246.7 հազ. դրամ			
	<b>Պլանը /Հազար դրամ/</b>	<b>Փաստացի /Հազար դրամ/</b>	<b>Տոկոսը %</b>	
	<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝</b>	1048246.7	1017048.6	97.0
	- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	904061.6	890455.7	98.5
	- Սեփական եկամուտներ	272723.8	262492.9	96.2
	- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	202901.1	183967.9	90.7
	<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝</b>	1138290.1	1011710.6	88.9
	- Վարչական բյուջեի ծախսեր	905305.1	859209.2	94.9
	- Ֆոնդային բյուջեի ծախսեր	291701.0	209876.4	71.9
	<b>Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝</b>	316701.0	217958.5	68.8
	- ճանապարհաշինություն	22800.0	16433.6	72.1
	- ջրամատակարարում	108204.8	104948.4	97.0
	- փողոցային լուսավորություն	0	0	0
	- գյուղատնտեսություն	17057.0	15145.2	88.8
	- Բնակարանային շինարարություն	0	0	0
Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն	<b>Ընթացիկ տարվա բյուջե՝ 1153014,1 հազ . դրամ.</b> Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:			
			<b>Պլանը</b>	
	<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝</b>			1153014.1
	- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝			1153014.1
	- սեփական եկամուտներ			283920.1

	- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	210000.0	
	<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝</b>	<b>1248395.5</b>	
	- Վարչական բյուջեի ծախսեր	1159014.1	
	- Ֆոնդային բյուջեի ծախսեր	299381.4	
	<b>Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝</b>	<b>299381.4</b>	
	- գյուղատնտեսություն	1000.0	
	- ճանապարհաշինություն	215531.4	
	- բնակարանային շինարարություն	33000.0	
	- ջրամատակարարում, ջրահեռացում	4500.0	
	- տեխնիկական միջոցների ձեռքբերում	4000.0	
	- Գույքի ձեռքբերում	13000.0	
<b>Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը</b>	Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվա բյուջեն՝ <b>2170422.5 հազ. դրամ.</b>		
	Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարվա բյուջեն՝ <b>2284152.5 հազ. դրամ.</b>		
	Ներկայացնել ծրագրի իրականացման և իրականացման տարվան հաջորդող տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտները և ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից նախատեսված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով		
		Ծրագրի իրականացման տարի 2025 թ. Հազ. դրամ	Ծրագրի իրականացման տարվան հաջորդող 2026 թ. տարի հազ. դրամ
	<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝</b>	2170422.5	2284152.5
	- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	1160422.5	1244152.5
	- Սեփական եկամուտներ	291328.9	305128.5
	- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	1010000.0	1040000.0
	<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝</b>	2170422.5	2284152.5
	- Վարչական բյուջեի ծախսեր	1160422.5	1244152.5
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	1010000.0	1040000.0	

<b>Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝</b>		
- ճանապարհաշինություն	1124358.7	1300000.0
- ջրամատակարարում, ջրահեռացում	160000.0	200000.0
- փողոցային լուսավորություն	-	25000.0
- գյուղատնտեսություն	-	
- Բնակարանային շինարարություն	115000.0	120000.0
-		
